ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. նոյեմբերի 9-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **03.11.2022թ-ի հարուցված թիվ 01/11 կարգապահական վարույթի վերաբերյալ (29.10.2022թ-ի «Լ. Արցախ»-«Ուրարտու» (ՊԼ-067) խաղի ժամանակահատվածում ենթադրյալ կարգապահական խախտումներ):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Լ. Արցախ» թիմի պաշտոնյա Արմո Արտաշեսի Ադամյանի (12360) կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 28.03, 40-րդ հոդվածի 37-րդ կետերը՝ «Լ. Արցախ» թիմի պաշտոնյա

Արմո Արտաշեսի Ադամյանին (12360) որակազրկել մինչև 2023 թվականի մայիսի 31-ը ներառյալ և «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

2) Հաստատված համարել «Լ. Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Լ. Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:
4) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Կարեն Արթուրի Մելքոնյանի (13399) կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Կարեն Արթուրի Մելքոնյանին (13399) որակազրկել 2 խաղով և «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:
5) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

2. 06.11.2022թ-ի «Չարենցավան-05»-«Նոա-05» (18A028) խաղի ժամանակահատվածում «Չարենցավան-05» թիմի ֆուտբոլիստ Դերենիկ Հովիկի Սարոյանի (13556) կողմից կարգապահական խախտում թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Չարենցավան-05» թիմի ֆուտբոլիստ Դերենիկ Հովիկի Սարոյանի (13556) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 29-րդ կետը՝ «Չարենցավան-05» թիմի ֆուտբոլիստ Դերենիկ Հովիկի Սարոյանին (13556) որակազրկել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 10-ը ներառյալ և Չարենցավանի մ/պ մ/դպ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով: